Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 2-ի N - Ն որոշման

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

(դրամ)

Բարձրագույն դիվանագիտական աստիճանը	Հավելավճարի հաշվարկված տոկոսը՝ դրույքաչափի նկատմամբ	
ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան	50	
ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի աստիճան	40	
Դիվանագիտական աստիճան	նվազագույն	առավելագույն
Առաջին դասի խորհրդականի աստիճան	32	34
Երկրորդ դասի խորհրդականի աստիճան	28	30
Առաջին դասի առաջին քարտուղարի աստիճան	24	26
Երկրորդ դասի առաջին քարտուղարի աստիճան	20	22
Երկրորդ քարտուղարի աստիճան	16	18
Երրորդ քարտուղարի աստիճան	12	14
Կցորդի աստիճան	8	10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

09_0335

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 2-ի N - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Դիվանագիտական աստիճանի համար սահմանված հավելավճարը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմում և առանձնացված ստորաբաժանումներում դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող դիվանագետներին:

2. Դիվանագիտական աստիճանի համար սահմանված հավելավճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով դիվանագետի զբաղեցրած պաշտոնի համար սահմանված դրույքաչափը:

3. Առաջին անգամ համապատասխան դիվանագիտական աստիճան շնորհվելու դեպքում նշանակվում է տվյալ աստիճանի համար սահմանված նվազագույն հավելավճարը:

4. Համապատասխան դիվանագիտական աստիճան շնորհելուց մեկ տարի հետո դիվանագետին՝ իր կողմից ներկայացված տարեկան հաշվետվության արդյունքների գնահատման հիման վրա, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով կարող է շնորհվել տվյալ աստիճանի համար սահմանված առավելագույն հավելավճարը:

5. Մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը համապատասխան դիվանագիտական աստիճան ունեցող դիվանագետներին վճարվում է տվյալ դիվանագիտական աստիճանի համար սահմանված առավելագույն հավելավճարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ